**Փակ լողավազանի կառուցման ծրագիր**




***Ծրագրի նկարագիրը***

Ծրագրով նախատեսվում է Երևանում կառուցել ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող փակ լողավազան: Անհրաժեշտ ենթակառուցվածքներով հագեցած լողավազանը կունենա 50մ երկարություն և մինչև 3մ խորություն, ցատկատախտակներ, ինչը հնարավորություն կտա հյուրընկալել տարբեր մրցաշարեր և առաջնություններ: Համալիրում նախատեսվում է հանդիսատեսի համար նախատեսված տրիբունայի կառուցում մինչև 1000 նստատեղով:
Լողավազանը կգործի ինչպես սպորտային, այնպես էլ առողջարարական կամ սիրողական նպատակների համար:
Ջրային համալիրում նախատեսվում է նաև շոգեբաղնիք, մարզասրահ և հանգստի սենյակներ:



***Տեխնիկական ցուցանիշներ***

Տարածքի մակերեսը շուրջ 5000 քմ:

***Ծրագրի ժամկետներ***

Շինարարության տևողությունը՝ շուրջ 2 տարի:




| | |
|---|---|
| *Ծրագրի արժեքը* | Շինարարության արժեքը կկազմի շուրջ 7 մլն ԱՄՆ դոլար: |
| *Ներդրումների ձևը և հիմնական պայմանները* | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում: |
| *Ներկա իրավիճակ* | Առկա է հայեցակարգային նախագիծ: |